

ՋԵՆՆԻ ԹԱՄԱՐՅԱՆ

ՀՈԿՅԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որևէ գրողի բառապաշարն ուսումնասիրելիս մեծ նշանակություն ունի նորակազմ բառերի, նոր իմաստների, բառագործածությունների քննությունը: Վերջիններս գնահատվում են որպես հեղինակի ներդրում գրականության լեզվի զարգացման մեջ կամ որպես արդյունք՝ գեղարվեստական նպատակներով առաջացած անհատական բառաստեղծման: Ոճական նպատակադրումով ասելիքը բանաստեղծականորեն, պատկերավոր ու հուզական արտահայտելու համար ստեղծագործողն իր կազմած նոր բառերով, նոր բառագործածությամբ, բառի իմաստային կառուցվածքի ընդլայնումով թարմացնում է տվյալ լեզվի բառապաշարը, նորովի հնչեցնում մոռացված, «դարերի փոշով ծածկված» շատ բառեր ու արտահայտություններ: Ուստի գրողի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու համար կարևորվում է հեղինակային նորաբանությունների ուսումնասիրությունը, քանի որ դրանք առարկաները, երևույթները, շրջակա աշխարհը նոր ձևով, անհատական վերաբերմունքի դրսևորմամբ ընկալելու և արտահայտելու արդյունք են:

Մասնագիտական գրականության մեջ *նորաբանություններին* տրվել են տարբեր բնորոշումներ, բայց դրանք տարբերվում են միայն ձևակերպումներով, քանի որ, ըստ էության, բոլորի էությունն էլ նույնն է¹:

Ինչպես նկատում է Զր. Աճառյանը, որ չպետք է կարծել, թե «նոր բառեր շինելու գործը միայն անցյալ դարի երկրորդ կեսից է սկսվում: Ընդհակառակը, նա շատ հին է»²:

Չամդրադառնալով նորաբանությունների վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ արտահայտված բոլոր տեսակետներին՝ պետք է ընդգծել, որ երևույթի բնութագիրը ժամանակին տվել է Էդվարդ Ադայանը՝ տարբերակելով նորաբանությունների երկու տեսակ՝ *ընդհանրացող* և *մեկուսացած*: Ըստ լեզվաբանի՝ ընդհանրացող նորաբանությունները ժամանակի ընթացքում ընդունվում են

¹ Նորաբանություններին անդրադարձել են Ս. Մելքոնյանը («Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության», Ե., 1984), Ս. Էլոյանը («Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն», Ե., 1989):

² Զր.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե., 1951, էջ 482:

հանրության կողմից, դադարում են նորաբանությունն լինելուց և անցնում են գործուն բառապաշար: Մինչդեռ մեկուսացած նորաբանություններին սահմանված է այլ կարգավիճակ. նրանք ընդհանրացող բառերի նման տևական գործածություն չեն ունենում: «Մեկուսացած նորաբանությունները, - նկատել է նա, - այն բոլոր բառերն են, որոնք գործածվում են այս կամ այն գրվածքում, բայց *կրկնվող գործածություններ չեն ունենում, ուստի և չեն անցնում բառապաշարի գործուն շերտի*»³: Այդ խմբի մեջ կարող են մտնել *դիպկածային բառերը, բանաստեղծական նորակազմ բառերի մի մասը՝ հեղինակային նորակազմությունները, անհարկի փոխառությունները* (օտարաբանությունները)» (ընդգծումը՝ Ջ. Թ):

Անշուշտ, բոլոր լեզվաբանների կարծիքները պարտադրելու հարկ չկա, սակայն անկարելի է շրջանցել նաև Պ. Պողոսյանի և Լ. Եզեկյանի տեսակետները:

Այսպես, Պ. Պողոսյանի համոզմամբ նորաբանությունները «նոր ստեղծված կամ նոր փոխառված բառեր են և կամ նոր իմաստներ են՝ դրված մեր հին բառերի մեջ: *Քանի դեռ այդպիսի բառերը չունեն ընդհանուր տարածում և զգալ են տալիս իրենց նոր լինելը, նորաբանություններ են, բայց ընդհանուր ճանաչում գտնելուց հետո դադարում են նորաբանություն լինելուց...*»⁴:

Լ. Եզեկյանը նախ ծջգրտում է «նոր բառեր» կամ «նորաբանություններ» հասկացության շրջանակները: Լեզվի մեջ մուտք գործող ամեն մի նոր բառ դեռևս նորաբանություն չէ, գտնում է նա, պետք է նկատի ունենալ այդ բառերի ստեղծման ժամանակը, որովհետև երեկվա նորաբանությունն այսօր հնաբանություն կարող է դառնալ կամ առհասարակ դուրս մտնել լեզվի բառապաշարից: Նա ավելի հստակեցնում ու ծջգրտում է նորակազմությունների բնույթն ու տեսակները: Այսպես, լեզվական առաջին խմբի նորաբանությունները, որոնք ունեն անվանողական արժեք, գործածվում են տվյալ նյութի թելադրանքով և ոճական երանգավորման տեսակետից առանձնակի հետաքրքրություն չեն ներկայացնում, կոչում է *բուն նորաբանություններ*: Իսկ երկրորդ խումբը նա անվանում է *հեղինակային նորակազմություններ*՝ նկատի ունենալով այն իրողությունը, որ «սրանք ունեն միայն *անհատական բնույթ* և իրենց ծագումով պատկանում են միայն տվյալ հեղինակին»⁵:

Հեղինակային նորաբանությունները (*նեոլոգիզմները*) ստեղծվում են լեզվի եղած արմատների, բառերի, ածանցների հիման վրա: «Եթե կոնկրետ կիրառության մեջ նոր բառը հանդես է գալիս ոճական-արտահայտչական

³ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 170:

⁴ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի հիմունքներ, գիրք առաջին, Ե., 1990, էջ 160-161:

⁵ Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Ե., 2005, էջ 163:

որոշակի արժեքով, նշանակում է միանգամայն արդարացված է դրա ստեղծումը անկախ այն բանից, թե դա հետագայում ընդհանրանալու միտումներ կցուցաբերի, թե ոչ: Նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թե գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտահայտելը»⁶:

Բնավ պատահական չէ, որ հեղինակային նորակազմությունների կամ դիպվածային բառերի օրինակներ մատնանշելիս լեզվաբանը Նարեկացուց, Թումանյանից, Տերյանից ու Չարենցից հետո այդ բնագավառում մեծ ներդրում ունեցողների մեջ առանձնացնում է Շիրազին, Սևակին և Սահյանին:

Լեզվի հիմնալի իմացությունը, զարմանալի լեզվազգացողությունը Յ. Շիրազին օգնել են դառնալ բազմաթիվ նորաբանությունների հեղինակ: Ս. Սելլոնյանը Շիրազի բառապաշարում հաշվում է շուրջ 1650 նորաբանություն, որոնցից ավելի քան 470-ը հանդիպում է «Չայոց դանթեականը» պոեմում⁷: Հախտուն բնավորության տեր պոետը բնական ու ինքնաբերական սփռում է նորակազմ բառերի շարքեր: Ս. Արզումանյանը գրում է. «Չայ ոսկեքնար բանաստեղծը՝ Յ. Շիրազը, ինքնատիպ խոսքաշինությամբ էլ հաստատում էր ազգային պոետի իր տարերքը: Նրա նոր բառակազմությունները, խոսքաշինարարական յուրովի փորձերը, գոյականական արմատներից հյուսած բայածևական պատկերներն ու մետաֆորները զարմանք են պատճառում իրենց դիպուկությամբ, իմաստային խոսքով: Ըստ որում՝ Շիրազը հավատարիմ էր իր այս տարերքին ոչ միայն բանաստեղծական փոքր ժանրերում՝ ծոն, էքսպրոմտ, գազել, երգ և այլն, այլ և չափածո լայն կտավներում՝ պոեմներում»⁸:

Հանգամանորեն քննելով Շիրազի պոեմներում գործածված նորաբանությունները՝ կարող ենք ասել, որ նա ինքնօրինակ ձեռագիր ունի նաև այս ասպարեզում: Շատ բառեր, որ գործածել է նա, ընդգրկվել են արդի հայերենի բառարաններում և ընդհանրանալու միտում կարող են ունենալ հայերենի բառամթերքում: Ոճաբանական ուսումնասիրություններում որոշակի դժվարություն, եթե չասենք անհնարինություն և պայմանականություն կա այս կամ այն գրողի ստեղծած նոր բառերի կազմը ճշտությամբ և հստակորեն որոշելու հարցում, քանի որ համապատասխան հեղինակային բառարաններում գրեթե չկան: Դժվարությունը, երբեմն էլ անորոշությունը պայմանավորված են նաև նրանով, որ առանձին դեպքերում հնարավոր չէ միանշանակորեն պնդել, թե այս կամ այն

⁶ Ս. Սելլոնյան, Սկնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 174:

⁷ Ս. Սելլոնյան, Հովհաննես Շիրազ. «Բարձրագույն դպրոց», Ե., 1993, էջ 141: Շիրազի նորաբանություններն ստուգելիս օգտվել ենք սույն ուսումնասիրության վերջում ներկայացված Շիրազի կերտած բառերի ցանկից:

⁸ Ս. Արզումանյան, Բանաստեղծության ազգային հոլը, Ե., 1998, էջ 477:

բառը Շիրազից առաջ գործածվել է, թե՛ ոչ: միգուցե այդ բառը երբևէ գործածվել է որևէ գրողի որևէ երկում, բայց ընդգրկված չէ արդի հայերենի բառարաններում: Այս դեպքում հեղինակային նորաբանությունների քննությունը զրեթե անհնարին է դառնում, քանի որ հայ գրականությունն անհատակ օվկիանոս է՝ եղած բառարանների համեմատությամբ: Ուստի այս կարգի հետազոտություններ կատարելիս պետք է հիմք ընդունել բառարաններում գետեղված բառամթերքը:

Շիրազն իր բոլոր պոեմներում նորաբանություններ ստեղծելիս անմիջական լեզվաբանական-բառակազմական խնդիրներ լուծելու նպատակ չի հետապնդել: Բայց մի բան որոշակի է, նա հրաշալիորեն տիրապետել է ոչ միայն չափածոյի գաղտնիքներին, այլև մեր լեզվի բառակերտման հնարավորություններին՝ բառաբարդման և ածանցման միջոցով նոր նշանակությամբ կենսունակ բառեր կերտելու դժվարին արվեստին: Այսպես ենք ասում, որովհետև շիրազյան նորաբանությունները, նրա հանճարի ուժով կերտված բառակազմական իրողություններ լինելով, չափազանց յուրահատուկ են, այնպես են օրգանապես միահյուսված բանաստեղծական տողին ու պատկերին, որ առաջին հայացքից կարծես արհեստականություն չունեն, բառակազմական ոչ մի օրենքի, ոչ մի միջոցի չեն ենթարկվում, բայց հատուկ ստեղծվել են հենց այդ տեղում դրվելու, այդ պատկերի բովանդակությունն ու հուզականությունն ընդգծելու և առավել արտահայտիչ դարձնելու համար: Շիրազի անհատական նորաբանությունների ձևաբանական կազմը բավական բազմազան է: Դրանք հանդես են գալիս որպես գոյական, ածական, բայ: Ինչպես քանակական կազմով, այնպես էլ խոսքում ունեցած արտահայտչականությամբ բացառիկ տեղ են զբաղեցնում ածականները: Եվ դա ինքնըստինքյան հասկանալի է, եթե նկատի ունենանք, որ գեղարվեստական խոսքում ածականները, հատկապես որպես մակդիր գործածելիս, անփոխարինելի միջոց են առարկաներն ու երևույթները ինքնատիպ, թարմ հատկանիշներով ներկայացնելու, խոսքի գեղագիտական արժեքը բարձրացնելու իմաստով: Ահա թե ինչու զրեթե բոլոր բանաստեղծների ու գրողների ստեղծագործություններում կարևոր տեղ ունեն ածական նորաբանությունները:

Մերք հովիկ ես, մերք փոթորիկ, մորիկ *մթնաբավիղ*:

Մերք կակաչի կուրծքն ես կարմիր, մերք *սևանդունդ* սիրտը,

Մերք կանթեղ ես *խավարաբուխ*, մերք *լուսածին* խավար,

Մերք՝ *ոգեխույզ* ավարառու, մերք ինքնազոհ ավար⁹:

Առաջին տողում առկա աստիճանավորման գեղարվեստական հնարանքն իր բարձրակետին է հասել *մթնաբավիղ* նորաստեղծ բառակիրով:

⁹ Դովհանես Շիրազ, Երկեր, 5 հատորով, Ե., 1981-1986, հ. 2, էջ 97:

Երկրորդ տողում *սևանդունդ* նորաբանությամբ ստեղծված է առարկայի հատկանիշի ներգործուն չափազանցում: Հաջորդ տողում առկա են *խավարաբուխ* կանթեղ և *լուսածին* խավար մակդիր-մակդիրակիր բառերը: Ստեղծվում է հակադրություն ոչ միայն բառակապակցությունների միջև, այլև մակդիրների և մակդիրակիր բառերի միջև՝ կանթեղ, բայց խավարաբուխ, խավար, բայց՝ լուսածին: Այս կրկնակի հակադրությունը բովանդակային խորք, ներքին հզոր լիցք է հաղորդում խոսքին՝ առիթ տալով նորանոր հակադրությունների: Հաջորդ *ոգեխույզ* նորաբանությամբ հեղինակը սեղմում է նկարագրական մի ամբողջ ձևակերպում. այն է՝ ոգին խուզարկող, մերկացնող:

Հովհ. Շիրազը նոր բառեր է կերտում հայերենին բնորոշ բառակազմական տարածված և անսպառ հնարավորություններ ընծեռող միջոցներով: Հետաքրքրական են բառաբարդումով կազմված գոյականները. *աստղանյութ*, *արգանդանյութ*, *արծվացում*, *մեղրափայրկյան*, *մեղսալեռ*, *նախաղբյուր*, *նախաբույր*, *ոգեսասող*, *ծարավանք*, *մարմնավայելք*:

Բնականաբար, միայն մեկ անգամ կամ հազվադեպ գործածված այդ բառերի իմաստները դրսևորվում են նրանց որոշակի կիրառության մեջ: Այսպես, գոյական+գոյական կառույցով ստացված *ժպտանյութ* բառի իմաստը պատկերից դուրս միայն կարող է կռահելի լինել, մինչդեռ պատկերի մեջ՝ իր տեղում, դառնում է ըմբռնելի, որովհետև այն շաղախը, որից Աստված պիտի ստեղծեր կնոջը, կնոջն անհագուրդ զգվանքի համար հող ու արևի կրքի, արևի ջերմության ու լուսնի ծյունասիրտ սառնության, կուռ աղամանդից կամքի ու դողդոջ եղեգից առած թուլության, աղվեսից խորամանկության և շնից մի մազ հավատարմության, օծի թույնի ու ողկույզի գինու հետ միասին տեսե՛ք՝ ինչո՞վ էր շաղված և ինչո՞ւ:

«Որ կինը թե չար, թե բարի լինի՝
Օձից թույն առավ, ողկույզից՝ գինի,
Անմեղ աստղերից *ժպտանյութ* բերեց...»¹⁰:

Կամ *մարմնանյութ* բառի իմաստն էլ անորոշ կմնար, եթե կտրեինք իր բառական միջավայրից.

«Ու միշտ պարմանի հուր մարմնի ծարավ
Կնոջ *մարմնանյութն* այն հողից առավ.
Որ տարին երկու գարուն պիտի ծնի...»¹¹:

Բանաստեղծին համակած ապրումը դիւլուկ և լիիմաստ արտահայտելն է հեղինակային նորաբանության բուն նպատակը: Այդ իմաստով նրանց արժևո-

¹⁰ Հովհաննես Շիրազ, Աստծու գլուխգործոցը, Ե., 1964, էջ 55 :

¹¹ Նույն տեղում, էջ 56 :

րումը, ոճախմաստային գունավորումը փորձենք դիտարկել բնագրում՝ ընդգծելով դրանց գործածության անհրաժեշտությունը գեղարվեստական խնդիրների լուծման գործում.

...Ու լուռ ելանք դուրս

Կախաղանայուն դառած անտառից,

Որ մահաստսափ սրսփում էր՝ «Սուռ-ւս»...¹²:

Այստեղ *կախաղանայուն* և *մահաստսափ* նորաբանությունները ծնվել են հուզական-հոգեբանական լարումից, միևնույն ժամանակ ուժեղացնում են բանատողի հնչեղությունը, իրենց բովանդակային տարողունակությամբ նոր իմաստային խորք հաղորդում ասելիքին՝ ընդգծելով երևույթի ահռելի չափերն ու համատարած բնույթը: Բազմաթիվ կոտորածներ, աղետներ, պատերազմներ, ողբերգություններ տեսած հայ մարդու լեզուն՝ հայոց լեզուն, չուներ այնպիսի բառեր, արտահայտություններ, որոնք կարողանային սպառնալիչ կերպով տալ այն սահմանեցուցիչ, «անզույգ» ողբերգության գոնե իրականին մոտ պատկերը: Եվ ահա այս ողբերգության նկարագրության փորձ կատարող բանաստեղծն ընտրեց Նարեկացու ուղին: Վերջինս, լինելով հայ գրականության մեջ նախատեսվող չունեցող մի գրական չափածո երկի հեղինակ, չբավարարվելով մեր լեզվում առկա բառերով, դիմում է բառաստեղծմանը:

«Մինչև նա՝ հայ գրականությունը լայն կտավի գեղարվեստական որևէ ստեղծագործություն չուներ,-գրում է Վ. Առաքելյանը՝ նկատի ունենալով Նարեկացուն,- մեր լեզվին պակասում էին գրական բնույթի այնպիսի բառեր, որոնք արտահայտում են մարդու հոգեկան ապրումները, բնության երևույթները, որոնք վերաբերում են մարդու աշխատանքային գործունեությանը, կյանքին ու կենցաղին»¹³: Յուրօրինակ, ինքնատիպ նոր բառերի հեղեղ է հորդում այս երկու հեղինակների տողերից.

Սուռ լիներ ողջը, ոչ ոք չտեսներ

Տիեզերամեծ եղեռնն իմ հայոց,

Ոսկրամոխիրը ծնկիս չհասներ,

Մարմնամոխիրը այրված տղայոց,

Չընկներ ոտքի տակ ճամփին ոչ մի գանգ,

Մի՛Ֆ լիներ դժոխքն այս *հավերժազանգ*...¹⁴:

Ընդգծված (*տիեզերամեծ, ոսկրամոխիր, մարմնամոխիր, հավերժազանգ*) նորաբանությունները բխում են ստեղծագործության բովանդակությունից, տվյալ խոսքային իրավիճակից:

¹² Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը, Ե., 1990, էջ 58:

¹³ Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., 1975, էջ 43:

¹⁴ Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը, Ե., 1990, էջ 47:

Երբ բանաստեղծը շատ է հմտանում նոր բառեր ստեղծելու արվեստին, անհրաժեշտ դեպքում հենց դրանց վրա է խարսխում իր խոսքի հուզականությունը: Հաճախ Շիրազը միևնույն արմատին զուգորդում է այլևայլ ձևույթներ՝ բանաստեղծական խոսքին հաղորդելով անսահման արտահայտչականություն.

Կրծքիս սալին սեր է կոփում սեր *սիրամոր* իմ սիրտը,
Սիրաշշունը, սիրամրմունք, սիրատրտունք իմ սիրտը,
Սեր-սիրաշունը, սեր-սիրափունք, սիրամռունք սիրտս սեր,
Հազար սրտի սիրաբաժին *սիրականությք* իմ սիրտը¹⁵:

Հատկանշական է, որ այստեղ կրկնվող սեր արմատով նորակազմ բառերը ստանձնում են գեղարվեստական խոսքի պատկերավորության ամբողջ բեռը. «համդես են գալիս որպես բանաստեղծական մտքի ծանրության կողմեր», միաժամանակ նպաստում բարեհնչունությանը և ներքին համագավորմանը՝ «ստեղծելով բանաստեղծական խոսքին առանձին հմայք հաղորդող առձայնություններ և բաղաձայնություններ»¹⁶:

Շիրազյան բայականություններն այքի են ընկնում իրենց տարրողունակությամբ: Որպես հիմք օգտագործվում են խորհրդանիշի արժեք ունեցող հասկացություններ՝ նորակազմ բառին տալով համապարփակ, ընդգրկուն իմաստ.

Թալեաթն էլ *թուրվեց*՝ վերջին նոր կրծքին հայ վերջին մանկան,
Հինգիզվեց թուրը՝ «Հիդնա՞ք հային և ոչ մի վայելյան»,
Էնվերն էլ *զորքվեց*՝ աչքերն էլ հանեք, սպանեք մոր հետ,
Նոր *լենկթեմուրվեց*՝ «Հախտի՞ շնչե այս ազգն այսուհետ»,
Դժոխաթուրվեց՝ «Կտրե՞ք մեզ ահ է հանճարը հայի
Բոլոր գլուխներն հայոց հիդրայի»¹⁷:

Հեղինակային նորաբանությունները հիմնականում կազմվում են նմանություն սկզբունքով, ինչպես վերոհիշյալ դեպքում: Հաճախ խորհրդանիշ դարձած անձնանուններով ստեղծված նորակազմությունները կողք կողքի դառնում են հետաքրքիր հակադրություններ.

Բայց չՀանթեցիք՝ զորքով *կայենված*, մահմեդված Բելին,
Էլ ո՞ւր է խիղճը, թեկուզ Զիսուսի, էլ ի՞նչն է անմեռ,
Երբ ջնջեց իմ հայ *աբելված* ազգին *կայենված* մի նեռ...¹⁸:

Ուշադրություն դարձնենք այն ինֆորմացիային, որ պարունակում է ընդամենն այս երեք տողը: Փոխանությունյան գեղարվեստական հնարանքի միջոցով մեր գիտակցության մեջ մի կողմից հառնում է բռնակալ Բելը, որը մահմեդված է: Նոր կողմը սակայն չի փոխել բռնակալի էությունը, նա նաև կայենված է,

¹⁵ Հովհաննես Շիրազ, Երկեր, Ե., 1984, հ. 2, էջ 146:

¹⁶ Ս. Մելքոնյան, Գեղարվեստական լեզվի բառապաշարի հարստացումը Հ. Շիրազի ստեղծագործություններում, «Լրաբեր հաս. գիտությունների», 1977, թիվ 2, էջ 32:

¹⁷ Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը, Ե., 1964, էջ 74:

¹⁸ Նույն տեղում, էջ 109:

քանի որ մարդասպան է, սակայն այս դեպքում մարդասպանը մենակ չէ, այլ գործով է գործում և պատահական չէ, որ մարդասպանը դարձել է ցեղասպան:

Հակադրության մյուս բեռն արելված ազգն է, որը հավատարիմ է մարդկային խղճին, Հիսուսին:

Այս զուգահեռներն իմի են բերում մարդկության պատմության ընթացքում կուտակված հսկայական տեղեկատվությունը՝ իրենց զգացմունքային բռնություններով:

4. Առաքելյանն իրավացիորեն նկատում է. «Սովետահայ տաղանդավոր բանաստեղծ Յ. Շիրազը իր գրական գործունեության սկզբից մինչև օրս ենթակա է Իսահակյանի բանաստեղծական խոսքի բարերար ազդեցությանը»¹⁹: Նշենք, որ այդ ազդեցությունն առկա է ոչ միայն առանձին պատկերների նմանության մեջ, այլ ինչպես Իսահակյանը, Շիրազը ևս «գիտե մոր բառերի արժեքը անցյալի հարաբերությունների դրսևորման միջև, հին բառերի դերն ու նշանակությունը մոր դրույթների, միջավայրի պատկերավորման մեջ»²⁰:

Այսպիսով՝ ոճական տեսակետից շիրազյան նորաբանությունները ներդաշնակվում են լեզվական հենքին, բանաստեղծական մտահղացմանը, անմիջական, խորիմաստ և հնչելու դարձնում խոսքը: Ինքնատիպ, դիպուկ նորաբանությունները Շիրազի յուրատիպ մտածողության, ուրույն պատկերազգացողության արգասիքն են: Դրանք ոչ թե բանաստեղծական խոսքի զարդաքանդակներ են, այլ ստեղծված են գեղարվեստական երկի բովանդակության ներքին թելադրանքով, ամփոխարիելի են իրենց ոճական նշանակությամբ, օգնում են արտահայտիչ, պատկերավոր ներկայացնել բանաստեղծի վերաբերմունքը՝ տեսանելի, ամբողջական դարձնելով գեղարվեստական պատկերը: Միաժամանակ դառնում են շիրազյան մտածողության ընդգծված պատկերավորության յուրահատուկ բաղադրատարրեր:

Неологизмы в поэмах О. Шираза

В данной статье рассмотрены стилистические особенности поэзии известного армянского поэта О. Шираза. Исследованы лексика его поэзии, неологизмы в поэмах, а также грамматические реалии.

¹⁹ Վ.Առաքելյան, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճական առանձնահատկությունները, Ե., 1964, էջ 177:

²⁰ Վ.Առաքելյան, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճական առանձնահատկությունները, Ե., 1964, էջ 177: